

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ  
ՊԱՏՎԱՍՏԱՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԱՐԱՐՄԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀ ԱՆ ՀՔՄԱՊՁԲ-2019/25

Երևան  
«17» 10 2019թ.

CONTRACT N  
ՀՀ ԱՆ ՀՔՄԱՊՁԲ-2019/25  
ON SUPPLY OF VACCINES FOR STATE NEEDS

Yerevan  
«17» October, 2019

Առողջապահության նախարարությունը, ի դեմս  
Նախարարության գլխավոր քարտուղարի  
պաշտոնակատար Ա.Սմբատյանի, որը գործում է  
Նախարարության կանոնադրության հիման վրա,  
այսուհետ «Գնորդ», մի կողմից,

և

Սանոֆի Պաստեռ քաժնետիրական ընկերությունը, ի  
դեմս դրա Միջազգային Առևտրային  
գործառնությունների ղեկավար Ֆաբրիս Բաշչերայի,  
որը գործում է լիազորագրի հիման վրա այսուհետ՝  
«Վաճառող», մյուս կողմից,  
կնքեցին սույն պայմանագիրը՝ հետևյալի մասին:

The Ministry of Health of the Republic of Armenia,  
represented by its acting general secretary A. Smbatyan,  
acting based on the charter of the Ministry, hereinafter  
"Buyer" from the one side,

and

"SANOFI PASTEUR S.A.", represented by its Head of  
International Commercial operations Mr. Fabrice  
Baschiera, acting on the basis of Delegation, hereinafter  
"Seller", from the other side,

have entered into this contract on the following:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով  
(այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով,  
ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին  
մատակարարել պայմանագրի N 1  
հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-  
ժամանակացուցով նախատեսված ապրանքը  
(այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է  
ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԳՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված  
ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու  
դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե  
մատակարարման ժամկետները խախտվել են 10  
բանկային օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝  
պայմանագրով նախատեսված տեխնիկական  
բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի  
անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած  
ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ  
սահմանելով անպատշաճ որակի ապրանքը  
պայմանագրին համապատասխանող որակի  
ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ

1. SUBJECT OF THE CONTRACT

1.1. The Seller undertakes to supply to the Buyer  
goods (hereinafter "goods"), provided by the Appendix No  
1-Technical specifications-purchase-schedule of this  
contract (hereinafter contract) in the order, volumes,  
terms and address, provided by the contract, and the Buyer  
undertakes to accept the goods and to pay for them.

2. THE RIGHTS AND OBLIGATIONS OF THE PARTIES

2.1. The Buyer has the right:

2.1.1. To refuse the goods in case of the failure of the Seller  
to supply them in the term provided by the contract, if the  
terms of supply are breached by more than 10 bank days.

2.1.2. If goods of improper quality, namely which do not  
correspond to the technical specifications provided by the  
contract, were delivered:

a) to demand to compensate the expenses incurred by it as  
a result of the goods being of improper quality,

b) not to accept the goods providing a reasonable term for  
replacement of goods of improper quality by the ones of  
the quality corresponding to the contract free of charge at

ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

զ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

զ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

its sole discretion and demand from the Seller to pay the penalty provided by clause 6.3. of the contract.

c) to refuse the performance of the contract and to demand to return the amount paid for the goods.

2.1.3. In case of supply of less quantity of Goods than provided by the contract:

a) to demand to complete the lacking quantity of the Goods,

b) to refuse the goods transferred and the payment for them, and if the payment for the goods was made, to demand the return of the paid amount and to pay the fine, provided by the clause 6.2. of the contract.

2.1.4. If the goods were delivered by breach of the term on type, at its discretion:

a) to accept the goods corresponding to the term on type and to refuse the remaining Goods,

b) to refuse all the goods delivered and to demand to pay the fine provided by the clause 6.2. of the contract,

c) to demand free of charge replacement of the goods not corresponding to the term on type with the ones of the type provided by the contract.

2.1.5. In case of breach of terms of supply by the Seller to provide new term of supply of goods at its sole discretion and demand the Seller to pay the fine provided by the clause 6.2. of the contract.

2.1.6. To demand the compensation of damages, if within a reasonable period of time after termination of the contract as the result of breach of an obligation by the Seller, the Buyer bought goods from another person at a higher, but reasonable price in place of those provided by the contract, the Buyer may present to the Seller a demand for compensation for losses in the amount of the difference between the price established in the contract and the price of the transaction signed in substitution, as well as all the necessary and reasonable expenses incurred by the Buyer for acquiring the Goods from another person.

2.1.7. Unilaterally to terminate the contract (fully or partially), in case of material breach of the contract by the Seller:

2.1.7.1. The breach of the contract by the Seller is considered as material, if:

a) The delivered goods are of improper quality that cannot be replaced within the term acceptable for the Buyer;

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 բանկային օրից ավելի,

2.1.8 Ձևնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

## **2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

## **2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

b) the terms of the goods delivery were breached for more than 10 bank days;

2.1.8. To examine the goods and to inform the Seller on the revealed defects immediately.

## **2.2. The Buyer is obliged:**

2.2.1. To implement all necessary actions insuring the acceptance of the goods supplied in accordance with the contract.

2.2.2. To ensure proper storage conditions of the goods and to notify the Seller immediately, in case of refusal of the goods delivered by the Seller in accordance with the contract.

2.2.3. In case of acceptance of the goods supplied in accordance with the order and terms provided by the contract, to pay to the Seller the amounts subject to payment, and in case of breach of the payment term to pay the fine provided by the clause 6.5. of the contract.

2.2.4. To notify the Seller on breach of term of the contract related to the quantity, assortment, quality of the goods immediately after revealing the defect or within reasonable term after the breach of the relevant term of the contract which should have been revealed due to nature and purpose of the goods.

2.2.5. To compensate proven damages caused to the Buyer after termination of the contract according to the clause 2.3.3. of the contract.

## **2.3. The Seller has the right:**

2.3.1. To demand the Buyer to accept the goods supplied in the order, volumes, terms and address provided by the contract.

2.3.2. To demand the Buyer to pay the amounts subject to payment to it for the goods supplied in accordance with the order, volumes, terms and address provided by the contract and accepted by the Buyer.

2.3.3. To terminate the contract (fully or partially) unilaterally, in case of material breach of the contract by the the Buyer:

2.3.3.1. The breach of the contract by the Buyer is considered as material, if the payment terms were repeatedly breached.

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Ընդունել միայն այն Ապրանքի հետ վերադարձը, որը չի համապատասխանում տեխնիկական բնութագրերին: :

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Պայմանագրի կատարման սպառնալից գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.3.4. To supply the goods ahead of schedule upon consent of the Buyer.

**2.4. The Seller is obliged:**

2.4.1. To supply to the Buyer goods in accordance with the order, volumes, terms and address provided by the contract.

2.4.2. To ensure the supply of the goods according to the sub-clause “b” of the clause 2.1.2 of the contract and /or clause 2.1.5. of the contract in the terms provided by the Buyer.

2.4.3. To deliver to the Buyer goods free from rights of third persons.

2.4.4. To deliver to the Buyer goods of quality and quantity provided by the contract in the terms and address indicated in the contract, and at the request of the Buyer to provide documents confirming the quality of the goods defined by RA legislation.

2.4.5. In case of supply of goods of less quantity to complete the goods in the order provided by contract.

2.4.6. To accept return of only the goods, which do not comply with the technical specification.

2.4.7. In cases provided by the contract to pay the fines indicated in the clauses 6.2. and 6.3. of the contract.

2.4.8. To deliver the goods and relevant documents of the goods to the Buyer.

2.4.9. To compensate proven damages caused to the Seller after termination of the contract according to the clause 2.1.7. of the contract.

2.4.10. In case of start of liquidation or bankruptcy process during the operation of the contract to inform the Buyer on it in advance in a written form.

**3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի գինը կազմում է 546,000 (հինգ հարյուր քառասունվեց հազար) Եվրո, բայց ոչ ավել քան 287,234,220 (երկու հարյուր ութսունյոթ միլիոն երկու հարյուր երեսունչորս հազար երկու հարյուր քսան) ՀՀ դրամ, ներառյալ մոտավորապես 13,650 (տասներեք հազար վեց հարյուր հիսուն) Եվրոյին համարժեք 7,180,855.5 (յոթ միլիոն հարյուր ութսուն հազար ութ հարյուր հիսունհինգ դրամ և հինգ ցենտ) ՀՀ դրամմաքսային տուրքերը և մաքային վճարները՝ ՀՀ

**3. THE PRICE OF THE CONTRACT AND THE ORDER OF THE PAYMENT**

3.1. The price of the contract amounts to RA drams equivalent to 546,000 (five hundred forty-six thousand) Euros, but not more than 287,234,220 (two hundred eighty-seven million two hundred thirty-four thousand two hundred twenty) RA drams, including approximately 13,650 (thirteen thousand six hundred fifty) Euros equivalent of 7,180,855.5 (seven million one hundred eighty thousand eight hundred fifty-five, 5) RA drams of custom duties and custom payments based on RA

օրենսդրության համաձայն Գնորդը, որը Գնորդը պետք է վճարի Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ Վաճառողի կողմից վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը (մաքսային հայտարարագիր) ներկայացնելուց հետո: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարզավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Պայմանագրի գնից 136,500 (մեկ հարյուր երեսունվեց հազար հինգ հարյուր) Եվրոն, բայց ոչ ավել քան 71,808,555 (յոթանասուներեկ միլիոն ութ հարյուր ութ հազար հինգ հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ նախքան Պայմանագրով նախատեսված առաջին մատակարարման վերջնաժամկետը: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա : Յուրաքանչյուր դեպքում մարվող գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ՝ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

3.3. Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամից վճարման օրվա դրությամբ փոխարկված Եվրոյով դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տարվա դեկտեմբերի 20-ը: Մինչև դեկտեմբերի 20-ը վերջին վճարումը պետք է կատարվի վերջին հանձնման-ընդունման արձանագրության ստորագրումից և Գնորդի կողմից մաքսազերծման նպատակով վճարման համար փաստաթղթերի ներկայացումից հետո, քանի որ մաքսազերծման համար ՀՀ պետական բյուջե

legislation and has to be paid by the Buyer to the Budget of RA upon Seller provides the documents, basis for the payment (custom declaration). The price of the Contract includes all the fees (expenses) made by Seller for the insurance of the performance of the contract, including taxes, duties, expenses of transportation and insurance, bonuses and expected profit.

The price of Goods supply is stable and the Seller does not have the right to demand to increase it, and the Buyer does not have the right to demand to decrease it.

3.2. The amount of 136,500 Euros (one hundred thirty-six thousand five hundred) but not more than 71,808,555 (seventy-one million eight hundred eight thousand five hundred fifty-five) RA drams from the Contract price Buyer transfers to the Seller's bank account as an advance payment before the first delivery deadline based on the Contract specification The repayment of the advance payment is settled based on delivery-acceptance protocols. In each case the amount of settlement is determined by the paid amount to the delivered amount based on delivery-acceptance protocol.

3.3. The Buyer pays for the supplied goods in RA drams converted in Euro at the date of the payment by transferring of sum to the bank account of the Seller. The transfer of monetary sums is made based on delivery-acceptance protocol in the amounts and months, provided by the payment schedule of the contract (appendix N 2). If the protocol is prepared after 20th of the given month and financial resources are provided in that month by payment schedule then the payment is done within 30 working days but not later than 20<sup>th</sup> of December of the given year. Before 20<sup>th</sup> of December final settlement to be done after signature of last goods-acceptance protocol and provision of custom clearance payment documents by the Buyer, since custom clearance payment to the state of RA indicated in clause 3.1. represents the approximate amount.

վճարման ենթակա գումարը, ինչպես նշված է 3.1. կետում, մոտավոր թիվ է կազմում:

#### 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

#### 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով Ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (այսուհետ՝ armeps) (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով

#### 4. THE QUALITY OF THE GOODS AND GUARANTEE

4.1. The Seller guarantees the correspondence of quality of the supplied goods to the requirements of state standards.

#### 5. THE DELIVERY AND ACCEPTANCE OF THE GOODS

5.1. The supplied goods are accepted by signature of delivery-acceptance protocol between the Seller and the Buyer. The fact of delivery of the goods to the Buyer is fixed by a document approved by the Buyer and the Seller by indicating the date of the document.

Till (including) the day of supply of the goods provided by the contract, the Seller provides to the Buyer the document, fixing the fact of the delivery of goods by the latter to the Buyer, signed by the Seller (Appendix No 3.1.), and also the protocol of delivery-acceptance (Appendix No 3) via system of electronic purchase - Armenian electronic procurement system (hereinafter - "armeps") (the manual of implementation of action is placed in the section "Electronic purchases" of [www.procurement.am](http://www.procurement.am)). Moreover, the Seller does not stamp the delivery-acceptance protocol, approves by electronic signature filling only that columns, which are related to its data (the order of filling is placed in the section "Orders of Minister of Finances" of [www.procurement.am](http://www.procurement.am)).

5.2. If the supplied goods correspond to the conditions of the contract, the Buyer signs and provides to the Seller the delivery-acceptance protocol and the positive conclusion being a base for its signature via system of electronic purchases armeps within 5 working days after the working day following the day of receipt of documents, indicated in the clause 5.1.

5.3. If the goods supplied or a part of them do not correspond to the conditions of the contract, then the Buyer does not sign the delivery-acceptance protocol and returns the delivery-acceptance protocol via system of electronic purchases armeps in the term indicated in the clause 5.2. of the contract and the negative conclusion

Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Մույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### 6. ԿՈՂՄԵՐԻ ՊՍՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով: Տուգանքը կիրառելի է այն դեպքում, երբ Ապրանքը Գնորդի կողմից չի ընդունվում, եթե անգամ այն մատակարարվել է Պայմանագրով սահմանված ժամկետում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

being a base for its non-signature. In case of application of this clause the Buyer takes the measures provided by the contract for such situations and applies the means of responsibility provided by the contract to the Seller.

5.4. If the Buyer does not accept the delivered goods in the term provided by clause 5.2. of the contract or does not refuse the acceptance of the goods, then the supplied Goods are considered to be accepted and the Buyer provides to the Seller the delivery-acceptance protocol signed by it via system of electronic purchases armeps the next working day of the deadline provided by clause 5.2. of the contract .

#### 6. THE RESPONSIBILITY OF THE PARTIES

6.1. The Seller is responsible for the quality of supplied goods and for keeping the terms of supply provided by the contract.

6.2. In case of breach of the terms of goods supply provided by the contract by the Seller, a fine is charged from the Seller for each overdue working day in the amount of 0,05 (zero point zero five) % of the goods price, subject to be supplied, but not supplied.

6.3. In each case of supply of goods not corresponding to technical specifications indicated in the clause 1.1. of the contract, a penalty is charged from the Seller in the amount of 0,5 (zero point five) % of the price of the contract.

A penalty is applied in case the goods are not accepted by the Buyer even if they are delivered within the period established by the Contract.

6.4. The penalty provided by clauses 6.2. and 6.3. of the contract are calculated and set off from the amounts payable to the Seller.

6.5. For breach of term provided by 3.3. of the contract by the Buyer, a fine is calculated towards the latter for each overdue working day in the amount of 0,05 (zero point zero five) % of the sum subject to payment, but not paid.

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.6. In cases not provided by the contract, the Parties bear responsibility for non-performance or improper performance of their obligations in the order defined by the RA legislation.

6.7. The payment of fine and/or penalty does not exempt the Parties from full implementation of their contractual obligations.

**7. ԱՆՀԱՂԹՍԱՐԵԼԻ ՈՒԺԻ  
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱՅՈՐ)**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**7. FORCE-MAJEURE**

The Parties are not liable for partial or complete failure to perform their obligations hereunder, if such failure was caused by force-majeure circumstances, which arose after signing of this contract, and which could not be foreseen or overcome by the Parties. Such circumstances are: earthquake, flood, fire, war, declaring a military and emergency situations, political upheavals, cessation of work of communication means, strikes, acts of state bodies and other, which could make impossible the fulfillment of the obligations under this contract and which are not under the Parties' control. In case the force-majeure circumstances continue more than 3 /three/ months, each of the Party has the right to terminate the contract informing thereabout to the other Party beforehand.

**8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

**8. OTHER CONDITIONS**

8.1. The contract enters into force after its signature by the Parties and operates till the full performance of obligations of the parties set forth by the contract.

The fact of being of the contract recorded by RA Ministry of Finance is the condition of the performance of rights and obligations of Parties provided by the contract.

8.2. The payment obligation of the party that arose from the contract may not be terminated by offset of counter obligation, which arose from another contract without written consent of parties approved by stamp. The right of a claim arising out of a contract may not be transferred to another person without the written consent of the debtor.

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում

Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել Ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի

8.3. In case if per result of control of performance of law requirements in accordance with the procedure prescribed by the law or per result of examination of complaints it is discovered that during the process of purchase organized for conclusion of the contract, before the conclusion of the latter the Seller submitted false documents (information and data) or the decision on choice of the latter as a chosen participant does not correspond to legislation of the Republic of Armenia, then after revealing those grounds the Buyer has a right to unilaterally terminate the contract in case if the revealed violations would be known before the conclusion of the contract, they would be ground for non-conclusion of contract according to RA legislation on purchases. Moreover, the Buyer does not bear the risk of loses caused to the Seller or loss of profit resulted with unilateral termination of the contract, and the latter is obliged to compensate the loses caused to the Buyer by its fault in the order prescribed by law and to the extent of relevant scope of the terminated contract.

8.4. The disputes related to the contract are subject to resolution in the courts of the Republic of Armenia.

8.5. Amendments and supplements may be made in the contract only upon mutual agreement of the parties through conclusion of additional agreement, which will be inseparable part of the contract.

If the price of the contract is factoring, it is prohibited to make such amendments in the contract as well as to the additional agreement signed during next years which lead to artificial amendment of the volumes of Goods to be purchased or the price of unit of Goods to be acquired or the amount of the contract.

Each case of amendment of the contract under influence of factors not depending on the parties of the contract are defined by the RA government.

8.6. The term of supply of Goods may be extended till its expiration by the contract in case of offer by the Seller provided that the requirement of use of the Goods by Buyer is not disappeared and the Seller's offer was submitted not later, than minimum 5 calendar days prior

առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի

to expiration of term, initially provided for supply by the Contract. Moreover, in case provided by this clause the supply term may be extended once for maximum 30 calendar days, but not more, than the term provided by the contract.

8.7. In the conditions of proper performance of the contract the gains (savings) or damages of parties (Seller and Buyer) are the gains or damages of the given party.

The obligations of the parties of the contract toward third persons, including other transactions concluded by the Seller in the frames of the contract and the obligations arising from them are out of regulation of the contract and may not affect the acceptance of results of performance of the contract. The relations, related to that transactions and performance of the obligations arising from them are regulated by norms regulating the relations arising from those transactions and the Seller is responsible for them.

8.8. The contract may not be amended in the result of partial non-performance of the obligations of the parties or fully terminated upon mutual consent of the parties except for cases of decrease of financial allocations necessary for supply of Goods in the order prescribed by the legislation of the Republic of Armenia. Moreover, the mutual consent of the parties of partial non-performance of the obligations of the parties or full termination should be acquired prior to the decrease of financial allocations necessary for supply of Goods in the order prescribed by the legislation of the Republic of Armenia.

8.9. The Buyer publishes the notification about unilateral termination of the contract by ground of non-performance or improper performance of obligations by the Seller in the section "Notifications on unilateral termination of the Contracts" of the web-page [www.procurement.am](http://www.procurement.am) indicating the date of publishing. The Seller is considered to be properly notified on unilateral termination of the contract from the next

լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է հայերեն և անգլերեն լեզուներով, երկու օրինակից: Հայերեն և անգլերեն լեզուներով տարբերակների միջև անհամապատասխանության առկայության դեպքում գերակայությունը տրվում է անգլերեն տարբերակին: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

working day following the publishing the notification provided by this clause.

8.10. The disputes regarding the contract are resolved through negotiations. In case of not reaching an agreement, the disputes are resolved in accordance with judicial procedure.

8.11. This contract consists of 11 pages, is made both in English and Armenian in 2 copies. In case of discrepancies between versions in English language and Armenian language, the version in English language shall prevail. The Appendixes No 1, No 2, No 3 and No 3.1. are considered as inseparable part of the contract.

8.12. The law of the Republic of Armenia is applied to the relations connected to the contract.

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**  
**ԳՆՈՐ**

**Առողջապահության նախարարություն**  
ք. Երևան, Կառավարության շենք N 3  
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Հ 900011105032  
ՀՎՀՀ 02507171



ստորագրություն  
Կ.Տ.

**Սանֆի Պաստեռ բաժնետիրական ընկերություն**  
Հասցե՝ Ֆրանսիա, Լիոն, 69007, Անրի Վալլի, տարածք 14  
Բանկ՝ Սոսիետե Զեներալ  
Տուր Սոսիետե Սուիս  
1, բուլվար Վիվիե Մերլե  
69443 Լիոն Սեդեքս 03 Ֆրանսիա  
IBAN՝ FR76 3000 3022 8000 0204 0666 008  
BIC՝ SOGEGFRPP  
**SANOFI PASTEUR SA**  
Siège Mondial  
14 espace Henry Vallée  
69007 LYON  
Կ.Տ. Tél. : +33 4 37 37 01 00

**9. Addresses, bank requisites and signatures of Parties**

**BUYER**  
**Ministry of Health**  
Address: RA, Yerevan, Government building N3  
Operational Department of RA Ministry of Finance  
Հ/Հ 900011105032  
ՀՎՀՀ 02507171



seal, signature

**SELLER**  
**Sanofi Pasteur S.A.**  
Address : 14 Espace Henry Vallee, 69007, Lyon, France  
Bank: SOCIETE GENERALE  
Tour Societe Suisse  
1, boulevard Vivier Merle  
69443 Lyon Cedex 03 France  
IBAN: FR76 3000 3022 8000 0204 0666 008  
BIC: SOGEGFRPP  
**SANOFI PASTEUR SA**  
Siège Mondial  
14 espace Henry Vallée  
69007 LYON  
seal, signature  
Tél. : +33 4 37 37 01 00

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

In case of necessity, the provisions that do not contradict the RA legislation may be included in the contract.



